ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

<<ՀՔ-Ն3ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-17/1>> ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի (շարունակություն)

ք. Չարենցավան _27_ _ապրիլի_ _2017թ._
ժամը _15[00]_

Մասնակցությամբ՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Բալբաբյան
Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Մկրտչյան, Վ. Բադալյանց
Հանձնաժողովի քարտուղար՝ Շ. Հարությունյան

1. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի (հայտում առկա փաստաթղթերի)**՝ անհամապատասխանությունների շտկման մասին**
(Ս. Բալբաբյան)

1.1 <<Նորմա-Պլյուս>> ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է իր կողմից ներկայացված հայտում առկա անհամապատասխանությունները հրավերով սահմանված ձևով:
Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

2. Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին
(Ս. Բալբաբյան)

2.1 Մասնակիցների զբաղեցրած տեղերի մասին տվյալները ներկայացված են ստորև.

Մասնակիցների զբաղեցրած տեղերը	Մասնակցի անվանումը	Մասնակցի կողմից առաջարկված գները (ՀՀ դրամ), ընդ որում՝		
		Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Առաջարկված ընդհանուր գինը
Չափաբաժին N 1				
1	<<ԻՆՏԵԿ>> ՍՊԸ	1 120 000	0	1 120 000
2	<<Էդվարդ Քոմփյութերս>> ՍՊԸ	1 160 833	232 167	1 393 000
Չափաբաժին N 2				
1	<<Էդվարդ Քոմփյութերս>> ՍՊԸ	396 667	79 333	476 000
2	<<ԻՆՏԵԿ>> ՍՊԸ	595 000	0	595 000
Չափաբաժին N 3				
1	<<Ֆիրմա Ալֆա>> ՍՊԸ	798 750	159 750	958 500
2	<<ՏԻՍԱ>> ՓԲԸ	2 047 916,67	409 583,33	2 457 500
Չափաբաժին N 4				
1	<<ԻՆՏԵԿ>> ՍՊԸ	30 000	0	30 000
Չափաբաժին N 5				
1	<<Նորմա-Պլյուս>> ՍՊԸ	135 000	27 000	162 000
2	<<ԻՆՏԵԿ>> ՍՊԸ	140 000	0	140 000

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

3. Գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից կատարվելիք գործողությունների մասին (Ս. Բալբաբյան)

3.1 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան՝

ա) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերի 2.3 կետի <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ.

բ) Ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2017 թվականի մայիսի 03-ը ներառյալ, ներկայացնել հրավերի 2-րդ մասի՝ հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը.

գ) 3.1 կետի բ) ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Ս. Բալբաբյան
(ստորագրությունը)

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Վ. Մկրտչյան
(ստորագրությունը)

_____ Վ. Բաղալյանց
(ստորագրությունը)

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Շ. Հարությունյան
(ստորագրությունը)